ՄՐՑՈՒՅԹ

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու բաց մրցույթ: Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 11:30, Տաշիրի համայնքապետարանում՝ Վ. Սարգսյան 94 հասցեում:

Մրցույթի է դրվում հետևյալ լոտերը՝

Լոտ 1. Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0493-0021 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 1-ին կարգի վարելահող, 0.831 հա, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 11350 մեկնարկային գնով:

Լոտ 2. Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0493-0014 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 1-ին կարգի վարելահող, 0.454 հա, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 6200 մեկնարկային գնով:

Լոտ 3. Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0493-0013 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 1-ին կարգի վարելահող, 0.419 հա, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 5750 մեկնարկային գնով:

Լոտ 4. Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0493-0007 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 1-ին կարգի վարելահող, 1.002 հա, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 13680 մեկնարկային գնով:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

ա/ հայտ,

բ/ մրցույթի մասնակցության համար սահմանված 2000 ՀՀ դրամի չափով վճարի անդորրագիր,

գ/ անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:

Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է 2021 թվականի նոյեմբերի 22-ին՝ ժամը 18:00-ին:

Մրցույթի անցկացման օրը վճարվում է նախավճար հողամասի մեկնարկային գնի 5 % չափով:

Մրցույթում հաղթող է ճանաչվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը: Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է Տաշիր համայնքի բնակչին կամ Տաշիր համայնքում գրանցված իրավաբանական անձին:

Մրցույթի կանոնակարգին մասնակիցները կարող են ծանոթանալ ամեն օր՝ ժամը 9:00–18:00 ընկած ժամանակահատվածում Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, գյուղատնտեսության, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնում:

Մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը անց է կացվելու 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ դեկտեմբերի 3-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-21-68, 2-34-06 հեռախոսահամարներով:

Տաշիրի համայնքապ»տարան